ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« »_____ 2025 թվականի N ___ - L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի N 978-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <Նորմատիվ իրավական ակտերի մասին> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի նոյեմբերի 1-ի <Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի և ճարտարապետաշինարարական նախագծերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննություն իրականացնող հանձնաժողովներ ստեղծելու և դրանց աշխատակարգերը հաստատելու մասին> N 978-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունը.

1) որոշման Հավելված N1-ի <ԿԱԶՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ> պարբերությունը, <Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն> բառերից հետո, լրացնել <Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն> բառերով,

2) որոշման Հավելված N2-ի <ԿԱԶՄ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ> պարբերությունը, <Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն> բառերից հետո, լրացնել <Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն> բառերով,

3) որոշման Հավելված N4-ի 3-րդ գլխի 23-րդ կետի 1-ին ենթակետի <N9 աղյուսակների> բառերից հետո լրացնել <և 5-րդ կետով նախատեսված ճարտարապետական, կոնստրուկտիվ և ինժեներական լուծումների

ապահովման> բառերով,

4) որոշման Հավելված N4-ի 3-րդ գլխի 23-րդ կետի 2-րդ ենթակետի <նորմատիվատեխնիկական փաստաթղթերին,> բառերից հետո լրացնել <այդ թվում՝ երկրաշարժադիմացկունության, էներգաարդյունավետության և էներգախնայողության, հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար մատչելիության, քաղաքացիական պաշտպանության, տարածքների համալիր բարեկազման պարտադիր միջոցառումներին և այլն,>,

5) որոշման Հավելված N4-ի 3-րդ գլխի 23-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի ճարտարապետահատակագծային առաջադրանքի օրինակելի ձևով նախատեսված հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար մատչելիության միջոցառումների ապահովման վերաբերյալ նախագծի պարտադիր միջանկյալ համաձայնեցումը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, ինչպես նաև շահագրգիռ այլ մարմինների միջանկյալ համաձայնեցումները կամ դրանց կողմից տրված եզրակացությունները՝ եթե այդպիսիք առկա են.>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: